

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԻՒՆ ԿԻԼԻԿԻՈՅ ՎԵՆԱՓԱՌ ՇԱՅՐԱՊԵՏ

Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

Մ Ե Բ Մ Է Զ

26 Յուլիս 1947 Նուսահեմի Ս. Յակոբեանց Միաբանութիւնը եւ Հայ հասարակութիւնը, ուրախութիւնն ունեցան իրենց մէջ ունենալու Ն. Ս. Օծուրիւն Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետը, որ Ս. Աբոու կուգայ նախ ի տեսութիւն Նորին Ամենապատիւ Պատրիարք Ս. Հօր, ապա յուսումնասիրութիւն կարգ մը ձեռագիրներու:

Լիբանանեան սահմանագլուխին Նորին Ս. Օծուրիւնը դիմաւորեցին յանուն Պատրիարք Հօր եւ Միաբանութեան, Լուսաւորապետ Հայրը, եւ Հոգեւորն Տ. Հայրիկ եւ Տ. Միւռն Վարդապետները: Ռեմիկի մօտ Նորին Վեհափառութիւնը դիմաւորելու փութացած էին նաեւ Հ. Բ. Ը. Միւրքեան, Հայ Նիսիսաւորաց Միւրքեան, Հայկական Միւրքեան, Զաւարեան Միւրքեան, Մօակուրային Միւրքեան, Դեղարուեստասիրաց Միւրքեան ներկայացուցիչները, Մարաշի եւ Զէյթունի Հայրեմակեցական Միւրքիւնները, եւ բերքերու թղթակիցները:

Նուսահեմի մէջ, Ս. Յակոբայ աւագ դրան առջեւ Միաբանութիւնն ու ժողովուրդը սրտառուչ ու խանդավառ դիմաւորում մը րբին: Պատրիարք Ս. Հայրը՝ Նկեղեցւոյ դռներն ընդունեց Նորին Ս. Օծուրիւնը, երբ Վեհափառ «Հրաշափառ» թափօրով կ'առաջնորդուէր Մայր Տանար, ժողովուրդի ցնծութեան եւ ծափերու մէջ:

Վեհափառ Ս. Յակոբայ Տանարին մէջ իր ուրախութիւնն ու տնորհակալութիւնը յայտնեց Աստուծոյ որ զինք անգամ մը եւս արժանի կ'ընէր այսպէս Ս. Տեղեաց այցելութեան եւ Ս. Պատրիարք Հօր եւ բովանդակ Միաբանութեան տեսութեան:

Յետոյ Նորին Ս. Օծուրիւնը Պատրիարք Հօր բերք մօտ առաջնորդուեցաւ Պատրիարքեան, ուր Ամեն. Պատրիարք Ս. Հայրը ըրաւ սրտազին եւ տալուորիչ բարեգալութիւն իր խօսքը:

Նորին Ս. Օծուրեան կ'ընկերանան Դեռ. Տ. Դերեմիկ Սպա., նորած Տ. Թորգոմ Աբեղան, եւ Վեհափառին անձնական քարտուղարն ու Անթիլիասի Դպրեվանքի ուսուցիչներէն Պ. Սիմոն Սիմոնեանը:

27 Յուլիս Կիրակի երեկոյեան վանքի սեղանասան մէջ, ի պատիւ Նորին Ս. Օծութեան բարի գալուտի նաեւ տնուեցաւ: Բաժակներ բարձրացան եւ ուղերձներ եղան Ամենայն Հայոց Հայրապետութեան, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Նուսահեմի եւ Կ. Պոլսոյ Պատրիարքութիւններու համար, Նորին Վեհափառութեան եւ Ս. Պատրիարք Հօր կողմէն:

Խօսեցան նոյնպէս Դեռ. Տ. Դերեմիկ Սպա., Հոգ. Տ. Նորայր, Տ. Հայկազուն եւ Տ. Սերովքե Վարդապետները, ոգեկոյումներ եւ մարբանքներ ընելով Հայաստանեայց Նկեղեցւոյ եւ իրմով պայմանաւոր ոգեկան արժեքներուն:

Վեհափառ Ս. Աբոու ժամանելէն ի վեր նուիրուած է անդադրում աշխատանքի: Օրուան մեծ մասը կ'անցընէ ձեռագրաց քննութեամբ եւ մանրակարգական ուսումնասիրութիւններով:

Յառաջիկայ Կիրակին Օգոստոս 17 Նուսահեմի՝ իսկ 24-ին եւ 31-ին Եւֆրատի եւ Հայֆայի գաղութներու մէջ պիտի հանդիսաւորուի Նորին Ս. Օծութեան Յոբելեանը:

Սիոնի Սեպտեմբեր թիւը ամբողջապէս պիտի նուիրուի Նորին Վեհափառութեան կեանքի եւ գործի պանծալման: